

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2015 թվականի առաջին եռամսյակի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացումն ընթանում է նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված առևտրի ոլորտի անկմամբ: Տնտեսական ակտիվության հիմնական շարժիչ ուժը եղել է գյուղատնտեսությունը:

2015 թվականի առաջին եռամսյակի միջին գնաճը կազմել է 5.1%: Արձանագրվել է պետական բյուջեի ընդհանուր եկամուտների անվանական շուրջ 2.5% և ծախսերի գծով 11.9% աճ: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2015 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով ամբողջական պահանջարկի վրա թողել է ընդլայնող ազդեցություն:

Համախառն պահանջարկ: 2015 թվականի առաջին եռամսյակում¹ վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 2.2%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2015 թվականի առաջին եռամսյակում կազմել են համապատասխանաբար 14.5% և 85.5%, ընդ որում իրական արտահայտությամբ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 6.7%-ով, իսկ մասնավորը՝ 5%-ով:

Կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ նվազել են 2.9%-ով՝ պայմանավորված հիմնականում պետական ներդրումների նվազմամբ, որը գնահատվում է 26.2%: Իսկ մասնավոր ներդրումների իրական աճը գնահատվում է 1.1%:

Ներդրումների փոփոխությանը դրական են նպաստել ծառայությունների ճյուղում կատարված ներդրումների աճը, բացասական նպաստում են ունեցել գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղում կատարված ներդրումների նվազումը²: Մասնավորապես, հանքագործության ոլորտում ներդրումները նվազել են 59.6%-ով, մշակող արդյունաբերության ոլորտում՝ 15%-ով, գյուղատնտեսության ոլորտում՝ 11.5%-ով, իսկ անշարժ գույքի հետ կապված գործունեության, կացության և հանրային սննդի կազմակերպման, պետական կառավարման ու պաշտպանության ոլորտներում ներդրումները համապատասխանաբար աճել են 7.5 անգամ, 2.5 անգամ և 56.2%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ նվազել են 1.7%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի նվազմամբ և արտաքին շուկաներում արտահանողների գնային

¹ Համախառն պահանջարկի ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:


² Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին:

մրցունակության թուլացմամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 24.9%-ով, ինչը պայմանավորված է եղել հումքային ապրանքների ներմուծման և բնակչության իրական տնօրինվող եկամուտների կրճատմամբ:

Այսպիսով, համախառն պահանջարկի աճին հիմնականում նպաստել է ներքին պահանջարկը:

Համախառն առաջարկ: 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին գրանցվել է տնտեսական ակտիվության իրական արտահայտությամբ 2.5% աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ընդ որում տնտեսական ակտիվությանն ամենամեծ՝ 1.4 տոկոսային կետ նպաստումն է ունեցել գյուղատնտեսության ճյուղը: Ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ճյուղերը նույնպես դրականորեն են նպաստել տնտեսական ակտիվությանը՝ համապատասխանաբար 0.5, 0.4 և 0.1 տոկոսային կետերով:

Գծապատկեր 1. 2014-2015 թվականների առաջին եռամսյակներում տնտեսության ճյուղերի թողարկումների նպաստումները տնտեսական ակտիվության իրական աճին, տոկոսային կետ:



Արդյունաբերություն³: 2015 թվականի հունվար-մարտին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 2.0% իրական աճ: Վերջինիս հիմնականում նպաստել է հանքագործական արդյունաբերության 27.7% աճը: Մշակող արդյունաբերությունն աճել է 0.6%-ով, որը հիմնականում պայմանավորված էր ծխախոտի արտադրության՝ 48.3%, հիմնային մետաղների արտադրության՝ 3.5% և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների 8.3% աճով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղը նույնպես աճել է 10.2%-ով:

³ Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 13.2%-ով, որը պայմանավորված է եղել թե՛ ներքին, թե՛ արտաքին պահանջարկով:

Ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրանքի իրացման անվանական աճը կազմել է 0.7%, որին հիմնականում նպաստել է ներքին պահանջարկի 3.9% աճը, մինչդեռ արտաքին պահանջարկը բացասական նպաստում է ունեցել արդյունաբերության իրացման աճին՝ նվազելով 4.2%-ով:


Գյուղատնտեսություն: 2015 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է 6.6%-ով, որին նպաստել են բոլոր ենթաճյուղերը: Մասնավորապես, ձկնորսությունն աճել է 23.1%-ով, բուսաբուծությունը և անասնաբուծությունը՝ համապատասխանաբար 28.9 և 3.5 տոկոսով: Անասնաբուծության արտադրանքի աճին նպաստել է մսի արտադրության՝ 4.1% և կաթի արտադրության 5.0% աճը: Ձվի արտադրությունը նվազել է 4.2%-ով:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալը 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել է 42.5 մլրդ դրամ՝ իրական արտահայտությամբ աճելով 0.8%-ով: Շինարարության ծավալների աճին դրականորեն է նպաստել միջազգային վարկերի, պետական բյուջեի, մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացված շինարարության համապատասխանաբար 57.1%, 12.3%, 8.6% աճը: Ֆինանսավորման մյուս բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները կրճատվել են: Ճյուղի աճին բացասական նպաստում է ունեցել բնակչության, կազմակերպությունների և համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության համապատասխանաբար 9.9%, 0.7% և 28.2% նվազումը:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ աճել են հիմնականում կացության և հանրային սննդի կազմակերպման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման, պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության և անշարժ գույքի հետ կապված գործունեության տեսակներին ուղղվող շինարարությունների մասնաբաժինները (տե՛ս Գծապատկեր 2):

Նվազել են հիմնականում հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում և մշակող արդյունաբերություն գործունեության տեսակներին ուղղվող շինարարությունների մասնաբաժինները:

Գծապատկեր 2. 2014-2015թթ. հունվար-մարտ ամիսներին շինարարության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների



Ծառայություններ և առևտուր: 2015 թվականի հունվար-մարտին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 3.9%-ով, որին դրականորեն է նպաստել մշակույթի, զվարճությունների և հանգստի, ֆինանսական և ապահովագրական գործունեության համապատասխանաբար 88.3% և 17.0% աճը: Բացասաբար է նպաստել տրանսպորտի (պայմանավորված տրանսպորտի բոլոր տեսակների ծառայությունների թողարկման ծավալների կրճատմամբ), տեղեկատվության և կապի (պայմանավորված հեռահաղորդակցության ծառայությունների կրճատմամբ), անշարժ գույքի հետ կապված գործունեության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման (պայմանավորված առողջապահության ծառայությունների կրճատմամբ), կացության և հանրային սննդի կազմակերպման, կրթության ծառայությունների ենթաճյուղերի համապատասխանաբար 28.4%, 5.7%, 6.8%, 6.1%, 4.6% և 2.9% նվազումը:

2015 թվականի հունվար-մարտ ամիսներին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 442.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համադրելի գներով, նվազել է 6.3%-ով: Առևտրի շրջանառության ծավալների նվազմանը նպաստել են բոլոր տեսակներով իրականացված առևտրի ծավալները, ընդ որում ամենամեծ նպաստումն ունեցել է մանրածախ առևտուրը՝ նվազելով 6.4%-ով:

Տրանսպորտը և կապ: 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2014 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 12.8%-ով: Այն պայմանավորված է եղել հիմնականում ավտոմոբիլային, երկաթուղային և մայրուղային խողովակաշարային տրանսպորտի տեսակներով իրականացված բեռնափոխադրումների ծավալների համապատասխանաբար 13.1%, 16.7% և 8.4% նվազմամբ: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալների կրճատումը մեծամասամբ պայմանավորված է ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալների 9.6% կրճատմամբ:

2015 թվականի հունվար-մարտ ամիսներին կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 8.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել հեռահաղորդակցության գործունեության ծավալների կրճատմամբ, մասնավորապես՝ բջջային կապի ծառայությունների՝ համադրելի գներով ծավալների 12.2% կրճատմամբ:

Գներ և սակագներ: 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գների աճ: Միջին գնաճը կազմել է 5.1%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 6.3% աճով, ոչ պարենային ապրանքների գների 4.4% և ծառայությունների սակագների 3.5% աճով:

2015 թվականի մարտին 2014 թվականի դեկտեմբերի նկատմամբ գնաճը կազմել է 2.3%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 2.8% աճով (նպաստումը գնաճին՝ 1.4 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 3.6% աճով (նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 0.8% աճով (նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ):

Աշխատանքի շուկա: 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 20.0%-ով՝ կազմելով 68623 մարդ:

2015 թվականի հունվար-մարտ ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը 2014 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 10.3%-ով՝ կազմելով 174347 դրամ⁴: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները պետական և ոչ պետական հատվածներում աճել են 13.4% և 6.7%-ով՝ կազմելով համապատասխանաբար՝ 156076 և 200724 դրամ: Իրական աշխատավարձը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.9%-ով:


⁴ 2015թ. միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները նախնական են: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները:

Արտաքին հատված: Արտաքին հատվածի վերլուծությունը հիմնված է նախնական պաշտոնական վիճակագրության վրա, որտեղ 2015 թվականի հունվար-մարտ ամիսների արտաքին առևտրի ցուցանիշներն ամբողջական չեն՝ պայմանավորված ԵՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների ոչ ամբողջական հավաքագրմամբ (հետագայում ենթակա են ճշգրտման): Հաշվի առնելով վերը նշվածը՝ ստորև ներկայացնվում է արտաքին հատվածի վերլուծությունը՝ հիմնված նախնական գնահատականների վրա:

Արտաքին առևտուր (դոլարային արտահայտությամբ)⁵: 2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է արտաքին հատվածի ցուցանիշների վատթարացում. նվազել են ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը և Հայաստան ներհոսող տրանսֆերտները:

2015 թվականի առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 3) կազմել է 409.9 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին առևտրի հաշվեկշիռը՝ արտահանումը և ներմուծումը հաշվարկած ՖՕԲ գներով, 2015 թվականի առաջին եռամսյակում կազմել է 305.6 մլն ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 3. Առևտրային հաշվեկշռի դինամիկան հունվար-մարտ ամիսներին (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը 2015 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով կազմել է 945.1 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով նախորդ տարվա համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում նախնական պաշտոնական տվյալների համաձայն տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների նվազում. արտահանումը նվազել է 23.1%-ով՝ կազմելով 267.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 30.5%-ով և կազմել է 677.5 մլն ԱՄՆ դոլար:

⁵ Արտահանումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:

Ներմուծում: 2015 թվականի առաջին երեք ամիսների ներմուծման նվազման ամենաբարձր նպաստումը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման կրճատումով (մոտ 7.1 տոկոսային կետ): Ներմուծման կառուցվածքում ամենամեծ կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ներմուծման կրճատումը (մոտ 2.9 տոկոսային կետ) շարունակվել է դեռևս 2013 թվականին երկրորդ կեսից սկիզբ առած բացասական նպաստման միտումը (պայմանավորված միջազգային գների նվազման ուղղությամբ տատանումներով):

Տարվա առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է ներդրումային բնույթի⁶ ապրանքների ներմուծման նվազում (մոտ 4.3 տոկոսային կետ), ընդ որում պետք է նշել, որ արձանագրվել է ներմուծման անկում բոլոր հիմնական ապրանքախմբերով⁷:

Արդյահանում: 2015 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով արտահանման կրճատմանը հակազդել է «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի աճը (համապատասխանաբար մոտ 0.8 և 0.2 տոկոսային կետերով): Արտահանման կրճատմանը ամենամեծ բացասական նպաստումն ապահովել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը: Բացասական է նպաստել նաև «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի նվազումը:


Ներմուծման ծածկման գործակից: 2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ բարելավվել է մոտ 7.2 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 49.4% (տե՛ս Գծապատկեր 5), որը հիմնականում պայմանավորվել է ներմուծման ավելի կտրուկ նվազմամբ:

Գծապատկեր 4. Ներմուծման ծածկման գործակիցը⁸, տոկոսներով (առաջին եռամսյակներ)

⁶ Որպես ներդրումային բնույթի դիտարկվել են «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքային խմբերը:

⁷ Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 5-րդ խմբագրության բաժինների:


⁸ Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ծառայությունների մասին տեղեկատվության բացակայության պատճառով ողջ շարքը ներկայացված է ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությամբ (ՖՕԲ գներով՝ Վճարային հաշվեկշիռ_6, «Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի» հոդված): 2015 թվականի ցուցանիշը՝ նախնական գնահատական է:



Ներմուծման առկայությունը: 2015 թվականի առաջին եռամսյակի ՀՀ ներմուծային⁹ առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք» (այս երկու խմբերի երկկողմանի արտաքին առևտուրը վերջին տարիներին համեմատաբար կայուն է), «Արվեստի ստեղծագործություններ», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի գծով երկկողմանի արտաքին առևտրի մասին (տե՛ս Գծապատկեր 6):

⁹ Ներմուծային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և՛ ներմուծում, և՛ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներմուծային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1» լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկեր 5. 2015 թվականի առաջին եռամսյակի ներճյուղային առևտուրը



Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբերի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից այդ ապրանքատեսակների գծով արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:


Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2015 թվականի առաջին եռամսյակի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 27.4%-ը բաժին է ընկել ԵՄ և 24%-ը՝ ԱՊՀ երկրներին: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Երկկողմանի փոխարժեք: Անցյալ տարվա վերջին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արագ տեմպերով արժեզրկումից հետո թեև ընթացիկ տարվա առաջին երեք ամիսներին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը հարաբերականորեն կայունացել է, նույնիսկ նկատվում է վերջինիս արժեզրկման տեմպերի նվազման միտում, այնուամենայնիվ անցյալ տարվա նկատմամբ այն դեռևս շարունակում է մնալ էականորեն արժեզրկված: Այսպես, 2015

թվականի մարտ ամսվա միջին փոխարժեքը կազմել է 477.65 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա մարտ ամսվա միջին փոխարժեքի (414.22 դրամ/ԱՄՆ դոլար) նկատմամբ արժեզրկված է 13.3%-ով: Իսկ ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 477.26 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (411.04 դրամ/ԱՄՆ դոլար) նկատմամբ արժեզրկվելով 13.9%-ով՝ 2014 թվականի համապատասխան ցուցանիշի 0.4% արժեզրկման դիմաց: Ըստ էության, փոխարժեքի նման վարքագիծը համաշխարհային տնտեսության և տարածաշրջանային զարգացումների արդյունք է: Ընդ որում տարվա անցած ամիսներին դրամի արժեզրկմանը մասամբ նպաստել է նաև նախորդ տարվանից դիտարկվող կապիտալի ներհոսքի (հիմնականում ոչ առևտրային բնույթի փոխանցումների տեսքով) զգալի դանդաղումը:

Գծապատկեր 6. Դրամ/ԱՄՆ դոլար միջին (կուտակային) փոխարժեքի փոփոխության դինամիկան (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, %)




2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ դրամի փոխարժեքը Եվրոյի նկատմամբ դրսևորել է արժևորման միտում՝ ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին միջին արժեքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժևորվելով 4.5%-ով: Իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ նշված ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը թեև դրսևորում է արժևորման տեմպերի նվազման միտում, այնուամենայնիվ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ այն դեռևս շարունակում է մնալ էականորեն արժևորված. ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը Ռ-Դ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժևորված է 54.1%-ով:

Արդյունավետ փոխարժեք: Արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած «գամբյուղի» նկատմամբ ՀՀ ազգային արժույթը (անվանական արդյունավետ փոխարժեք) միջին արժեքով 2015 թվականի առաջին երկու ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժևորվել է 12.5%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը

արժևորվել է (դրամի դիրքերը ուժեղացել են) հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, քանի որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները միջին հաշվով դոլարի նկատմամբ արժեզրկվել են ավելի շատ (մոտ 27%-ով), քան ՀՀ դրամը: Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքը, շարունակելով նախորդ տարվա միտումը, միջին արժեքով նշված ժամանակահատվածում արժևորվել է 10.7%-ով¹⁰ (տե՛ս գծապատկեր 8), ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի ընթացիկ հաշվի վրա:

Գծապատկեր 7. Իրական արդյունավետ փոխարժեքի ամսական միջին շարժընթացը (տոկոս նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ)



Ֆինանսական շուկա: 2015 թվականի մարտին փողի բազան կազմել է շուրջ 792 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով ընդամենը 1.6%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն նվազել են 25.9%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 64%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 9.7%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 43.6%), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով՝ 12.3%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 56%):

¹⁰ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2015թ. մայիսի 4-ի դրությամբ տվյալները:

2015 թվականի մարտին փողի զանգվածը կազմել է 1601.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 4.1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն աճել են 1.9 անգամ, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 14.5%-ով:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը նվազել է 9.8%-ով, դրամային ավանդների բացասական նպաստումը փողի զանգվածի աճին կազմել է՝ 0.2 տոկոսային կետ, իսկ արտարժույթային ավանդների դրական նպաստումը՝ 6.3 տոկոսային կետ¹¹:

2014 թվականի տարեվերջին ՀՀ դրամի արժեզրկման և արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ ավելացման պայմաններում ավանդների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում դոլարայնացման մակարդակը նկատելիորեն բարձրացել է և 2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պահպանվել այդ մակարդակում: 2015 թվականի մարտին արտարժույթով ավանդների կշիռը փողի զանգվածում կազմել է 52.7%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով՝ 4.2 տոկոսային կետով, իսկ դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 64.7%, աճելով՝ 3 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2015 թվականի մարտին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են ընդամենը 3.8%-ով: Նույն ժամանակահատվածում դրամային ավանդների տոկոսադրույքների միջին ամսական մակարդակը կազմել է 15.21%, 2014 թվականի 9.71%-ի համեմատ (մինչև մեկ տարի ժամկետով ներգրավված):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2015 թվականի մարտին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 14.2%-ով¹²: Նշենք որ վարկերի 67%-ը կազմում են արտարժույթով վարկերը, և աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4 տոկոսային կետ: ՀՀ դրամով վարկավորման տոկոսադրույքը 2015 թվականի մարտին կազմել է 19.11%՝ 2014 թվականի նույն ամսում արձանագրված 16.72%-ի համեմատ:

2015 թվականի առաջին եռամսյակում առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով ՀՀ դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների տարբերության միջև նվազման միտում է արձանագրվել: Միջին եռամսյակային ցուցանիշը (սպրեդ) նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 4.4 տոկոսային կետ:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2014 թվականի նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 9.39%, ապա 2015 թվականի առաջին

¹¹ Փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

¹² Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

եռամսյակում այն կազմել է 14.8%: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 31 մլրդ դրամ (18.7 մլրդ դրամ հետգնման պայմաններում)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14.5 մլրդ դրամի (2.5 մլրդ դրամ հետգնման պայմաններում) համեմատ, իսկ միջին ժամկետայնությունը կազմել է 835 օր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1045 օրվա համեմատ:

2015 թվականի առաջին եռամսյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.96 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 1:

Աղյուսակ 1. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2015 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում

Ամիսներ	I	II	III
Առևտրային բանկերի վարկեր*	16.77	18.71	19.11
Առևտրային բանկերի ավանդներ*	12.06	13.99	15.21
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	9.50	10.50	10.50

* Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

2015 թվականի մարտ ամսին իրականացվել է արտարժույթային պարտատոմսերի երկրորդ թողարկումը և տեղաբաշխումը 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով, ընդ որում տեղաբաշխման պայմանները փոխվել են 2013 թվականին 700 մլն ԱՄՆ դոլար ծավալով առաջին անգամ կատարված տեղաբաշխման պայմանների համեմատ: Այսպես, մարման ժամկետայնությունը կազմել է 10 տարի՝ 2013 թվականի 7 տարի մարման ժամկետայնության համեմատ, և եկամտաբերությունը կազմել է 7.5% (արժեկտրոնային եկամտաբերությունը՝ 7.15%)՝ 2013 թվականի 6.25%-ի (արժեկտրոնային եկամտաբերությունը՝ 6.0%) համեմատ, ինչն արտացոլում է շուկայական իրավիճակը: Միաժամանակ, այս պարտատոմսերի իրացումից ստացված գումարից կատարվել է նաև 2013 թվականին տեղաբաշխված Եվրոբոնդերի՝ 200 միլիոն ամերիկյան դոլար ծավալի մարում:

Հարկաբյուջետային հատված

2015 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 249.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.5%-ով, իսկ հարկային եկամուտները կազմել են 232.5 մլրդ դրամ՝ նույն


ժամանակահատվածի համեմատ աճելով 3.8%-ով: Ընդ որում, հարկային եկամուտների աճը պայմանավորվել է հիմնականում եկամտային հարկի և մաքսատուրքերի աճերով:

2015 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 268.3 մլրդ դրամ՝ նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 11.9%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 258.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 13.7%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 9.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 22.9%-ով: Ընթացիկ ծախսերի աճը պայմանավորվել է հիմնականում սոցիալական նպաստների ու կենսաթոշակների, աշխատանքի վարձատրության, ապրանքների և ծառայությունների ինչպես նաև այլ ծախսերի աճերով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անկումը պայմանավորվել է շենքերի և շինությունների շինարարության նվազմամբ:

2015 թվականի առաջին եռամսյակի արդյունքում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 18.6 մլրդ դրամ՝ նախորդ տարի նույն ժամանակահատվածում ձևավորված 3.8 մլրդ դրամ հավելուրդի համեմատ:

Հարկաբյուջետային ազդակը: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2015 թվականի առաջին եռամսյակին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 1.74 ընդլայնող հարկաբյուջետային ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների, և՛ ծախսերի գրեթե հավասար՝ շուրջ 0.9 ընդլայնող ազդեցություններով:

Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2012 թվականից եռամսյակներով




ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվել էր ավելի քան 243.8¹³ մլրդ դրամ բյուջետային եկամուտների ստացում: «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով Կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 7.1 մլրդ դրամով (2.9%-ով) և կազմել 250.9 մլրդ դրամ, որից 246.7 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 4.3 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: Հաշվետու եռամսյակում ստացվել են 249.6 մլրդ դրամի փաստացի եկամուտներ՝ ապահովելով ՀՀ կառավարության ծրագրով կանխատեսված ցուցանիշի 99.5%-ը: Նշված գումարից 246.9 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով ծրագրի 100.1%-ը, 2.7 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհները, որոնք 36.7%-ով զիջել են ծրագրված ցուցանիշը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 100.3%-ով, այլ եկամուտներինը՝ 96.3%-ով: Նշենք, որ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 5.9 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսված մուտքերի 92.8%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմել են 243.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 2.5%-ով կամ 6.2 մլրդ դրամով: Մասնավորապես՝ հարկային եկամուտները (ներառյալ՝ պետական տուրքերը) աճել են 3.8%-ով կամ 8.6 մլրդ դրամով, իսկ պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների գծով մուտքերը նվազել են համապատասխանաբար 23.1 և 9.8 տոկոսով:


¹³ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության դեկտեմբերի 18-ի 2014 թվականի N1515-Ն որոշման 4-րդ կետի 26-րդ ենթակետի համաձայն, ներառված չեն ՀՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները:

Գծապատկեր 9. ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2014-2015թթ. առաջին եռամսյակներում



Հարկային եկամուտների աճի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռն ավելացել է 1.16 տոկոսային կետով և կազմել 93.13%: Մինչնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 0.8 և 0.36 տոկոսային կետով և կազմել 5.79% և 1.08%:

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2014-2015թթ. առաջին եռամսյակներում



Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

2015 թվականի առաջին եռամսյակի ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.1%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են 232.5 մլրդ դրամ և 100.3%-ով ապահովել Կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 3.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է եկամտային հարկի և մաքսատուրքի գծով մուտքերի աճով՝ համապատասխանաբար 8.9%-ով (5.5 մլրդ դրամով) և 43.4%-ով (4.4 մլրդ դրամով): Բացի այդ, 2014 թվականի հուլիսի 1-ից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է նոր հարկատեսակ՝ նպատակային սոցիալական վճարը, որի գծով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 2.2 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, մի շարք հարկատեսակների (շահութահարկի, շրջանառության հարկի, ավելացված արժեքի հարկի, ռադիոհաճախականության պարտադիր վճարի) գծով նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ արձանագրվել է անկում: Արդյունքում հարկերի և տուրքերի ընդհանուր մուտքերը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ բացարձակ մեծությամբ արձանագրել են 8.6 մլրդ դրամով աճ:

2015 թվականի առաջին եռամսյակում հարկային եկամուտների և պետական տուրքերի 41.6%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին: Այն կազմել է 96.8 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էապես չի փոփոխվել: ԱԱՀ-ի մուտքերից 48.6 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 48.2 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից, որից 3.8 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: ԵՏՄ երկրներից ներմուծումը ներքին շրջանառության մեջ հաշվառելու հետ կապված՝ ներքին շրջանառությունից ստացված մուտքերը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են 4%-ով կամ 1.9 մլրդ դրամով: Մաքսային սահմանին գանձված մուտքերը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 4.1%-ով կամ 2.1 մլրդ դրամով:

2014 թվականի նոյեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-174-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ից ազատված է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների իրականացումը:

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-186-Ն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) օրենքով սահմանվել է, որ՝

1. ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, ներմուծվող ապրանքների նկատմամբ ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետների հետաձգման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածով սահմանված արտոնությունը կիրառվում է՝ անկախ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեծությունից,

2. 2015 թվականի հունվարի 1-ից այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցել նաև առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 4.5%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 10.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթակապիտալի ապրանքների հարկումից ստացվել է 6.5 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթակապիտալի ապրանքների հարկումից՝ 3.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 10.4%-ով կամ 981.5 մլն դրամով՝ պայմանավորված ներմուծվող ենթակապիտալի ապրանքների գծով մուտքերի 24.2% աճով: Տեղական արտադրության ենթակապիտալի ապրանքների հարկումից ստացված մուտքերը նվազել են 6.8%-ով:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված՝ ՀՀ հարկային հարաբերությունների կարգավորումներում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1) վերանայվել են ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծվող ապրանքների համար անուղակի հարկերի հաշվարկման կարգը և ժամկետները: Մասնավորապես՝ սահմանվել է, որ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները (բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարների) ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան

հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ: Ալցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ներմուծման համար հաշվարկված ալցիզային հարկի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում «Ալցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ներմուծման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում՝ որպես մաքսային մարմինն վճարվող գումարներ.

2) եթե հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ներմուծվող ապրանքների՝ ԱԱՀ-ով և (կամ) ալցիզային հարկով հարկման բազաները փոքր են հարկային մարմնի տեղեկատվական բազայում ներմուծման հաշվետու ժամանակաշրջանում առկա՝ նույն ապրանքների ներմուծման հարկման բազայի 80 տոկոսից, ապա հարկային մարմնի ներկայացրած գրավոր ծանուցագրի հիման վրա, մինչև այդ ծանուցագրի ներկայացման օրվան հաջորդող տասներորդ օրը ներառյալ, ներմուծողի կողմից վճարվում են ծանուցագրում նշված հարկման բազայի 80 տոկոսի և իր կողմից հաշվարկված հարկման բազայի տարբերությունից հաշվարկվող հարկերը: Միաժամանակ սահմանվել է, որ ծանուցագրում նշված գումարի նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ ծանուցագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրվանից սկսած: Միաժամանակ, ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ալցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով նախատեսված արտոնությունների կիրառության շարունակականությունը ապահովելու նպատակով 2015 թվականի փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ալցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-5-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 19-ին և կիրառվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա) ամբողջությամբ վերախմբագրվել է նշյալ օրենքը, որի շրջանակներում որոշակի փոփոխություններ են կատարվել նաև դրանով հաստատված՝ ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 8.4%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով շուրջ 19.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ *շահութահարկի* մուտքերը նվազել են 8.5%-ով կամ 1.8 մլրդ դրամով:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-238-Ն օրենքով վերանայվել է հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգը: Մասնավորապես՝ սահմանվել է, որ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռքբերված՝ մաշվածքի ենթակա, սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ երկարաժամկետ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) վերցված ոչ ընթացիկ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված՝ ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքից:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 2.6 մլրդ դրամ շրջանառության հարկ, որը 28%-ով կամ 1 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներից գանձված հարկի նվազմամբ: Շրջանառության հարկից 1.3 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, 269.8 մլն դրամը՝ արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներից, 170.8 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից, 49 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից և 794.1 մլն դրամը՝ այլ գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից:

2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից) առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկի դրույքաչափը 3.5 տոկոսի փոխարեն սահմանվել է 1 տոկոս, և զուգահեռաբար սահմանվել է կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու պարտադիր պահանջ:

2015 թվականի փետրվարի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 5-ից) սահմանվել է, որ ապրանքներ ձեռք բերելու պարտադիր փաստաթղթավորման պահանջը չի տարածվում մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում որևէ օրվա դրությամբ առկա ապրանքային մնացորդի վրա, որի մասին հարկ վճարողները մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևի տեղեկանք:

Հաշվետու ժամանակահատվածում 67.9 մլրդ դրամ են կազմել *Եկամտային հարկից* ստացված մուտքերը՝ ապահովելով պետական բյուջեի հարկերի և տուրքերի 29.2%-ը և 8.9%-ով գերազանցել 2014 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից գանձված մուտքերի աճով: Եկամտային հարկից շուրջ 64.2 մլրդ դրամը մուտքագրվել է աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից, շուրջ 782.8 մլն դրամը՝ ձեռնարկատիրական գործունեությունից, 2.5 մլրդ դրամը՝ պասիվ եկամուտներից և 444.8 մլն դրամը՝ այլ աղբյուրներից ստացված եկամուտներից:

2015 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-133-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր և (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի՝ անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտների հանրագումարն ընթացիկ տարում 58.35 մլն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասից հարկ վճարողի կողմից տարեկան հաշվարկվում է եկամտային հարկ 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները և հարկային գործակալի միջոցով հաշվարկված ու պահված հարկի գումարները, իսկ հարկային գործակալ չհանդիսացող անձանցից եկամուտներ ստանալու դեպքում՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները և ֆիզիկական անձի կողմից գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից ինքնուրույնաբար հաշվարկված հարկի գումարները: Միաժամանակ, վերոգրյալով պայմանավորված՝ սահմանվել է նաև, որ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) անհատ ձեռնարկատեր և (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքները:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող՝ սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով:

2015 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 6.3%-ն ապահովվել է *մաքսադուրքի* հաշվին՝ կազմելով 14.6 մլրդ դրամ, որից 4.7 մլրդ դրամն այն գումարներ են, որոնց գծով վճարման պարտավորությունները ծագել են նախքան 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 5-րդ և 8-րդ հավելվածները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառելը: Շուրջ 9.9 մլրդ դրամ

է ստացվել նշված հավելվածների գործողության մեջ մտնելուց հետո: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ մաքսատուրքի մուտքերն աճել են 43.4%-ով կամ 4.4 մլրդ դրամով:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված՝ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-241-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին) ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգիրքը: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով կարգավորում են այն հարաբերությունները, որոնք Մաքսային միության մաքսային օրենսգրքի և 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համաձայն, կարող են կարգավորվել ազգային օրենսդրությամբ:

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի համաձայն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ից)՝ ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման համար մաքսատուրքեր չեն գանձվում, իսկ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման համար գանձվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 16-ի թիվ 54 որոշմամբ հաստատված՝ միասնական մաքսային սակագներով հաշվարկված մաքսատուրքեր՝ բացառությամբ պայմանագրի 4-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, որոնց համար մաքսատուրքը վերոնշյալ պայմանագրով նախատեսված անցումային ժամանակահատվածում գանձվում է նույն պայմանագրի հավելվածով սահմանված դրույքաչափերով: Բացի այդ, վերոնշյալ պայմանագրի 2-րդ հավելվածի 1-ին կետով փոփոխություն է կատարվել 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության մեջ՝ սահմանելով, որ ներմուծման մաքսատուրքի գումարների բաշխման նորմատիվը ՀՀ համար կազմում է 1.13%: Անդամակցությունից հետո Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողնման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» համաձայնագիրը, որով սահմանված են ֆիզիկական անձանց կողմից միության սահմանով անձնական օգտագործման ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսատուրքի և հարկերի միասնական դրույքաչափեր: Միաժամանակ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածով սահմանվել է, որ Միության անդամ չհանդիսացող պետությունից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող

ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի) հետևյալ միասնական դրույքաչափերով.

1. 0 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը,

2. 22.5 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը գերազանցում է 200 հազար դրամը, սակայն չի գերազանցում 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը,

3. 30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 30 կիլոգրամը գերազանցող յուրաքանչյուր կիլոգրամի համար Միության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված չափերը, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը գերազանցում է 30 կիլոգրամը, կամ եթե մաքսային արժեքը գերազանցում է 1000 եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 701.9 մլն դրամ *հաստատագրված վճարներ*՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 0.3%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել է 28%-ով կամ 273.5 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 5.3 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտները նվազել են 8.8%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների գծով մուտքերի նվազմամբ: Դրանք կազմել են 205.9 մլն դրամ և 77.6%-ով կամ 714.1 մլն դրամով նվազել 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ: Բացի այդ, ՀՀ-ում իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 64%-ով կամ 283.7 մլն դրամով և կազմել են 159.7 մլն դրամ: 1 մլրդ դրամ է գանձվել այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար, որոնք 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են 29.7%-ով կամ 425.4 մլն դրամով: 341.7 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար, որոնք նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 18%-ով կամ 74.8 մլն դրամով: Մուտքերից 3.2 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարված ռոյալթին, որը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել է 45.5%-ով կամ 1 մլրդ դրամով:

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-190-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներն (այդ թվում՝ ոռոյալթիների կանխավճարների կատարումը) ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.15 տոկոսի չափով (նախկին 0.2 տոկոսի փոխարեն): Միաժամանակ, սահմանվել է, որ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած վճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ 0.15 տոկոսի չափով, մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.2 մլրդ դրամ են կազմել *նպատակային սոցիալական վճարները*, որոնք ներդրվել են 2014 թվականի հուլիսի 1-ից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 5.4 մլրդ դրամ *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.3%-ը: Մասնավորապես՝ 1.5 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները, 1.3 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 1 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով նախորդ տարիների պարտավորությունների վճարումից ստացված միջոցները, 780.6 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 294.1 մլն դրամ՝ հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները, 185.5 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 170.8 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները և 167.2 մլն դրամ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմապիտակների ձեռք բերման վճարները: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 3.5%-ով կամ 183.3 մլն դրամով:

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ճանապարհային վճարներն ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.15 տոկոսի չափով (նախկին 0.25 տոկոսի փոխարեն): Միաժամանակ, սահմանվել է, որ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած վճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը հաշվարկվում է ժամկետանց

յուրաքանչյուր օրվա համար՝ 0.15 տոկոսի չափով, մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

Բացի վերը շարադրված օրենսդրական փոփոխություններից, հարկային եկամուտների մակարդակի վրա որոշակի ազդեցություն է ունեցել 2014 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՕ-156-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից), որով սահմանվել է, որ 2015 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունն ազատվում է հիմնական հարկերից (ԱԱՀ-ից, շահութահարկից կամ եկամտային հարկից, շրջանառության հարկից, արտոնագրային վճարներից):

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 7 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 102.8%-ը: Չնայած նշված մուտքերի ծրագրային ցուցանիշն ընդհանուր առմամբ զգալի փոփոխություն չի կրել, առանձին եկամտատեսակներ դրսևորել են տարբեր վարքագիծ: Մասնավորապես՝ ծրագրի գերազանցում է արձանագրվել ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար գանձվող տուրքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 1.1 մլրդ դրամ և 9.1 մլն դրամ՝ 3 անգամ և 35.8%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշները: 2015 թվականի առաջին եռամսյակում կանխատեսված ցուցանիշը զիջել են պետական գրանցման (24.1%-ով՝ կազմելով շուրջ 794.6 մլն դրամ), հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների (22.9%-ով՝ կազմելով շուրջ 341.9 մլն դրամ), լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու (4.5%-ով՝ կազմելով 2.1 մլրդ դրամ), դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճարքերի բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու (16.2%-ով՝ կազմելով շուրջ 362.3 մլն դրամ), օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների (1.3%-ով՝ կազմելով 2.1 մլրդ դրամ), գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների (14%-ով՝ կազմելով շուրջ 88.3 մլն դրամ) և մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու (72.5%-ով՝ կազմելով 55 հազար դրամ) համար գանձվող տուրքերը:

2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական տուրքերից ստացված մուտքերը նվազել են 11.1%-ով կամ 869.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների, պետական գրանցման և հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի համապատասխանաբար 23.9%-ով, 27.3%-ով և 32.4%-ով նվազմամբ:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-223-Ն (լրացումն ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 31-ից) օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են Գյումրու «Շիրակ» օդանավակայանի օդային ուղևորները:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-167-Ն (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) օրենքով ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման համար կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից Երևան քաղաքում ներքաղաքային յուրաքանչյուր երթուղու տարեկան սպասարկման համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-167-Ն (ուժի մեջ է մտել 2014 թվականի դեկտեմբերի 27-ից) օրենքով վերանայվել է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար սահմանված պետական տուրքը և սահմանվել է պետական տուրք՝

1) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,

2) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի չորսից ավելի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով,

3) ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝

ա) Երևան քաղաքում՝ ամսական բազային տուրքի 12-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 34-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 120-ապատիկի չափով,

բ) այլ քաղաքներում՝ ամսական բազային տուրքի 8-ապատիկի չափով, կամ եռամսյակային բազային տուրքի 23-ապատիկի չափով, կամ տարեկան բազային տուրքի 80-ապատիկի չափով,

գ) այլ վայրերում՝ ամսական բազային տուրքի 5-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 13.5-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 45-ապատիկի չափով,

դ) սահմանամերձ գյուղերում՝ ամսական բազային տուրքի 4-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 9-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-189-Ն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) օրենքով սահմանվել է, որ պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները, ինչպես նաև պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15 տոկոսի չափով (նախկին 0.5 տոկոսի փոխարեն): Միաժամանակ, սահմանվել է, որ նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չվճարված (չգանձված) պետական տուրքի գումարի նկատմամբ՝ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Պաշտոնական դրամաշնորհներ

2015 թվականի առաջին եռամսյակում արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 2.7 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 63.3%-ը: Նշված ցուցանիշը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 14 նպատակային ծրագրերի շրջանակներում նախատեսված շուրջ 2.7 մլրդ դրամի դրամաշնորհները չեն ստացվել: Միևնույն ժամանակ, որոշ նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված դրամաշնորհները գերազանցել են եռամսյակային ծրագիրը, բացի այդ 249.7 մլն դրամի միջոցներ են ստացվել պետական բյուջեով չնախատեսված ծրագրերի շրջանակներում: Արդյունքում նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված դրամաշնորհների փաստացի ցուցանիշը կազմել է նախատեսված գումարի 60.9%-ը՝ շուրջ 2.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 480.8 մլն դրամ է ստացվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 88.6%-ը, 43 մլն դրամ (նախատեսվածի 74.3%-ը)՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, 893.2 մլն դրամ՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ

իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 368.7%-ը, 853.9 մլն դրամ՝ Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 44.6%-ը, 130.3 մլն դրամ՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 42.3%-ը: Եվս 79.9 մլն դրամ հատկացվել է Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում, որը 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված չէ: Եվրոպական ներդրումների բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Դանիական Թագավորության և Նիդերլանդների կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները՝ 1 մլրդ դրամ ընդհանուր գումարով, չեն ստացվել: Հաշվետու եռամսյակում ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում ստացվել է 217.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 112%-ը: Նշված գումարից 216.9 մլն դրամը հատկացվել է սոցիալական պաշտպանության ոլորտին:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները նվազել են 23.1%-ով կամ 811.3 մլն դրամով:

Այլ եկամուտներ

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2015 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 14.5 մլրդ դրամ և 96.3%-ով ապահովել եռամսյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետության կողմից ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների և ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից ստացված մուտքերով, որոնք կազմել են համապատասխանաբար 5.7 մլրդ դրամ և 3.9 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 93.9%-ը և 83.5%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 16.3 մլն դրամ՝ 12.5%-ով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 72 մլն դրամ՝ 62.1%-ով գերազանցելով ծրագիրը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական գույքի վարձակալությունից եկամուտներն աճել են 7.4%-ով:

Առաջին եռամսյակում 1.1 մլրդ դրամի մուտքեր են ստացվել բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների

տեղաբաշխումից և դեպոզիտներից՝ կազմելով ծրագրի 86.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 61.6%-ով:

6.7 մլն դրամ է մուտքագրվել իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով՝ 68%-ով գերազանցելով առաջին եռամսյակում ծրագրված մուտքերը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 86.2%-ով:

Պետության կողմից տված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 5.8 մլրդ դրամի տոկոսավճարներ, որոնք կազմել են ծրագրված մուտքերի 94%-ը և 7.2 անգամ գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես՝ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են 5.7 մլրդ դրամ կամ ծրագրային մուտքերի 93.9%-ը, որը պայմանավորված է տարբերությունն ապրիլ ամսին վճարելու հանգամանքով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները ստացվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 51.1 մլն դրամ:

2015 թվականի առաջին եռամսյակում իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից պետական բյուջե է մուտքագրվել 2.7 մլրդ դրամ՝ 2.1%-ով գերազանցելով ծրագրված և 4.8%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը կազմել են 3.9 մլրդ դրամ՝ 16.5%-ով զիջելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված եկամուտները նվազել են 15.1%-ով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներից մուտքերը կազմել են 883 մլն դրամ՝ 4 անգամ գերազանցելով 2015 թվականի առաջին եռամսյակի ծրագրված ցուցանիշը, սակայն 82.4%-ով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ այլ եկամուտների գծով արձանագրվել է 9.8%-ով անկում, որը հիմնականում ձևավորվել է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների և բանկերում ու այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների նվազման և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների աճի արդյունքում:

« Հ Պ Ե Տ Ա Կ Ա Ն Բ Յ ՈՒ Ջ Ե Ի Ծ Ա Խ Ս Ե Ր Ը »

« Հ Հ կ առ ա վ ար ու թ յ ա ն ծ ռ ա գ թ ո վ 2015 թ Վ ա կ ա ն Ի առ ա ջ Ի ն եռ ա մ ս յ ա կ ու մ ն ա Խ ա տ ե ս վ ել է թ 288.8 մ լ թ դ թ ա մ ծ ա Խ ս եր Ի կ ա տ ար ու մ : Հ ա շ Վ Ի առ ն ել թ վ « Հ ա յ ա ս տ ա ն Ի Հ ա ն Ր ա պ ե տ ո թ յ ա ն 2015 թ Վ ա կ ա ն Ի պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի մ ա ս Ի ն » Հ Հ օ Ր Ե ն ք Ի 9-ր դ հ ող վ ա ծ Ի 10-ր դ կ ե տ Ի և 11-ր դ հ ող վ ա ծ Ի 3-ր դ կ ե տ Ի պ ա հ ա ն ջ ն եր ը , որ ո ն ց հ ա մ ա ձ ա յ ն Հ Հ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ծ ռ ա գ թ ա յ Ի ն և փ ա ս տ ա գ Ի ց ու ց ա ն Ի շ ն եր ու մ ն եր առ վ ել ե ն ն ա և Հ Հ պ ե տ ա կ ա ն մ ար մ Ի ն ն եր Ի ար տ ա բ յ ու ջ ե տ ա յ Ի ն մ Ի ջ ո ճ ո ն եր ը և Հ Հ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի գ առ ա ն ց ս ա հ մ ա ն ա փ ա կ մ ա ն Ի Ր ա կ ա ն ա ց վ ող ծ ա Խ ս եր ը , Ի ն չ պ ե ս ն ա և կ Ի Ր առ ել թ վ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե ու մ փ ո փ ի խ ո թ յ ու ն ն եր կ ա տ ար ել ու վ եր ա բ եր յ ա լ օ Ր Ե ն ք ո վ կ առ ա վ ար ու թ յ ա ն ը վ եր ա պ ա հ վ ա ձ Լ Ի ա գ թ Ր ո թ յ ու ն ն եր ը ' Հ Հ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ծ ա Խ ս եր Ի առ ա ջ Ի ն եռ ա մ ս յ ա կ Ի ծ ռ ա գ Ի Ր ը ճ շ ո վ ել է ' կ ա զ մ ել թ վ 303.8 մ լ թ դ թ թ ա մ , որ Ի դ Ի մ ա ց փ ա ս տ ա գ Ի ծ ա Խ ս եր ը կ ա զ մ ել ե ն 268.3 մ լ թ դ թ թ ա մ : Պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ծ ա Խ ս եր Ի եռ ա մ ս յ ա կ ա յ Ի ն ծ ռ ա գ Ի Ր ը կ ա տ ար վ ել է 88.3%-ո վ , ը ն դ որ ու մ , շ ե լ ու մ ն եր Ի ը ն դ Ի ա ն ու թ գ ու մ ար Ի 63.9%-ը բ ա ժ Ի ն է ը ն կ ել ը ն թ ա ց Ի կ ծ ա Խ ս եր Ի ն : Հ ա Ր կ է ն շ ել , որ չ ն ա յ ա ձ բ յ ու ջ ե տ ա յ Ի ն ծ ա Խ ս եր Ի հ ա մ ե մ ա տ ա բ ար ց ա ծ Ր կ ա տ ար ող ա կ ա ն Ի ն ' ա պ ա հ ո վ վ ել է պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ծ ա Խ ս ա յ Ի ն ծ ռ ա գ թ եր Ի շ Ր ջ ա ն ա կ ն եր ու մ պ ե տ ա կ ա ն մ ար մ Ի ն ն եր Ի կ ող մ Ի ց ս ա հ մ ա ն վ ա ձ կ ար գ ո վ ս տ ա ն ձ ն ա ձ պ ար տ ա վ թ յ ո թ յ ու ն ն եր Ի ա մ բ ող ջ ա կ ա ն և ժ ա մ ա ն ա կ Ի ն կ ա տ ար ու մ ը : Ն ա Խ ո Ր դ տ ար վ ա ն ու յ ն ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ձ Ի հ ա մ ե մ ա տ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ծ ա Խ ս եր ն ա ճ ել ե ն 11.9%-ո վ կ ա մ 28.6 մ լ թ դ թ թ ա մ ո վ ' պ ա յ մ ա ն ա վ թ Ր վ ա ձ ը ն թ ա ց Ի կ ծ ա Խ ս եր Ի ա ճ ո վ :

Հ ա շ Վ ե տ ու ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ձ ու մ ը ն թ ա ց Ի կ ծ ա Խ ս եր ը կ ա զ մ ել ե ն 258.6 մ լ թ դ թ թ ա մ , որ ո ն ց եռ ա մ ս յ ա կ ա յ Ի ն ծ ռ ա գ Ի Ր ը կ ա տ ար վ ել է 91.9%-ո վ : Ն ա Խ ո Ր դ տ ար վ ա առ ա ջ Ի ն եռ ա մ ս յ ա կ Ի հ ա մ ե մ ա տ ն շ Վ ա ձ ծ ա Խ ս եր ն ա ճ ել ե ն 13.7%-ո վ կ ա մ 31.2 մ լ թ դ թ թ ա մ ո վ :

Ը ն թ ա ց Ի կ ծ ա Խ ս եր Ի ց 25.9 մ լ թ դ թ թ ա մ ն ուղ ղ վ ել է պ ե տ ա կ ա ն հ Ի մ ն ար կ ն եր Ի ա շ Խ ա տ ող ն եր Ի ա շ Խ ա տ ա վ ար ձ եր Ի վ ճ ար մ ա ն ը ' կ ա զ մ ել թ վ ծ ռ ա գ թ Ի 89.1%-ը և 27.4%-ո վ գ եր ա զ ա ն ց ել թ վ ն ա Խ ո Ր դ տ ար վ ա առ ա ջ Ի ն եռ ա մ ս յ ա կ Ի ց ու ց ա ն Ի շ ը , որ ը պ ա յ մ ա ն ա վ թ Ր վ ա ձ է 2014 թ Վ ա կ ա ն Ի հ ու լ Ի ս Ի 1-Ի ց պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ող ն եր Ի ա շ Խ ա տ ա վ ար ձ եր Ի բ ար ձ Ր ա ց մ ա մ բ :

Ծ առ ա յ ո թ յ ու ն ն եր Ի և ա պ Ր ա ն ք ն եր Ի ձ ե ո ք բ եր մ ա ն ն ա պ ա տ ա կ ո վ պ ե տ ա կ ա ն բ յ ու ջ ե Ի ց օ գ տ ա գ թ Ր ձ վ ել է 44.7 մ լ թ դ թ թ ա մ , որ ը կ ա զ մ ու մ է եռ ա մ ս յ ա կ ա յ Ի ն ծ ռ ա գ թ Ի 89.1%-ը : 2014 թ Վ ա կ ա ն Ի առ ա ջ Ի ն եռ ա մ ս յ ա կ Ի հ ա մ ե մ ա տ ն շ Վ ա ձ ծ ա Խ ս եր ն ա ճ ել ե ն 13.3%-ո վ , Ի ն չ ը հ Ի մ ն ա կ ա ն ու մ պ ա յ մ ա ն ա վ թ Ր վ ա ձ է պ ա յ մ ա ն ա գ թ ա յ Ի ն ա յ լ ծ առ ա յ ո թ յ ու ն ն եր Ի և ն յ ո թ եր Ի ձ ե ո ք բ եր մ ա ն ծ ա Խ ս եր Ի ա վ ել ա ց մ ա մ բ :

Հ ա շ Վ ե տ ու ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ձ ու մ շ ու Ր ջ 20.2 մ լ թ դ թ թ ա մ ուղ ղ վ ել է պ ե տ ա կ ա ն պ ար տ ք Ի ս պ ա ս ար կ մ ա ն ը ' կ ա զ մ ել թ վ եռ ա մ ս յ ա կ ա յ Ի ն ծ ռ ա գ թ Ի 96%-ը : Մ ա ս ն ա վ թ Ր ա պ ե ս ' 7.5 մ լ թ դ թ թ ա մ տ Ր ա մ ա դ թ ղ վ ել է ն եր ք Ի ն պ ար տ ք Ի և 12.7 մ լ թ դ թ թ ա մ ' ար տ ա ք Ի ն պ ար տ ք Ի ս պ ա ս ար կ մ ա ն ը : Պ ե տ ա կ ա ն պ ար տ ք Ի ս պ ա ս ար կ մ ա ն ծ ա Խ ս եր ը ն ա Խ ո Ր դ տ ար վ ա ն ու յ ն ց ու ց ա ն Ի շ Ի հ ա մ ե մ ա տ ա ճ ել ե ն 2.8%-ո վ ,

կամ 544.3 մլն դրամով: Մասնավորապես՝ ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերը նվազել են 13.6%-ով կամ 1.2 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է տոկոսադրույքների բարձրացման պայմաններում ավելի բարձր եկամտաբերությամբ հետգնումների իրականացմամբ: Արտաքին պարտքի սպասարկման ծախսերում արձանագրվել է 15.8%-ով կամ 1.7 մլրդ դրամով աճ, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով: Հայաստանի Հանրապետությունը մեկ շնչին ընկնող Համախառն Ազգային Եկամտի ցուցանիշով վերջին մի քանի տարիներին շարունակաբար գերազանցել է Զարգացման Միջազգային Ընկերակցության (ՋՄԸ) կողմից յուրաքանչյուր տարի այդ ցուցանիշի գծով սահմանվող շեմը և դիտարկվել է վարկունակ՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի պայմաններով վարկավորման տեսանկյունից: Հաշվի առնելով այդ հանգամանքը և հիմնվելով ՋՄԸ-ի հետ ստորագրված մի շարք վարկային համաձայնագրերի դրույթների վրա՝ Համաշխարհային Բանկը հայտնել էր, որ այդ վարկերի սպասարկման գծով վճարումների ժամանակացույցերը ենթակա են վերանայման՝ կամ լրացուցիչ տոկոսադրույքի սահմանման, կամ մարման ժամկետի կրճատման: Հայաստանի կառավարությունն ընտրություն կատարել է ի օգուտ առաջին տարբերակի և արդյունքում ՋՄԸ-ն սահմանել է այդ վարկերի գծով լրացուցիչ տոկոսադրույք՝ տարեկան 1.7%-ի չափով: Արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա ազդեցություն ունեցած գործոններից են նաև կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի ծավալի աճը, ինչպես նաև վարկերի սպասարկման գծով վճարումների փոխարկումների ժամանակ կիրառվող փոխարժեքների փոփոխությունը:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 6.8 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 95.8%-ը: Նշված գումարից շուրջ 5 մլրդ դրամը տրամադրվել է պետական կազմակերպություններին, 1.8 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուբսիդիաների ծախսերը նվազել են 4%-ով կամ 280 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 13.1%-ը կամ 34 մլրդ դրամ տրամադրվել է դրամաշնորհներին՝ ապահովելով 88.2% կատարողական: Նշված գումարից 33.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, որից 11 մլրդ դրամը՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: 413 մլն դրամ է տրամադրվել միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության համար՝ կազմելով ծրագրի 95%-ը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 3.8%-ով՝ հիմնականում պայմանավորված համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 34.7%-ը՝ շուրջ 89.8 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով եռամսյակային ծրագրի 94.6% կատարողական: Մասնավորապես՝ 26 մլրդ դրամ է տրամադրվել նպաստներին, 63.8 մլրդ դրամ՝ կենսաթոշակներին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 85.6%-ը և 98.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են համապատասխանաբար 18.9%-ով (4.1 մլրդ դրամով) և 17.9%-ով (9.7 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված 2014 թվականի օգոստոսի 1-ից՝ բազային նպաստի և 2014 թվականի հուլիսի 1-ից հիմնական կենսաթոշակի չափի և աշխատանքային ու զինվորական ծառայության ստաժի յուրաքանչյուր տարվա արժեքի բարձրացմամբ:

2015 թվականի առաջին եռամսյակում 37.3 մլրդ դրամ է տրամադրվել այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 92%-ը: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ ծախսերն աճել են 15.5%-ով:

ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 9.7 մլրդ դրամ կամ ծրագրի 43%-ը: Մասնավորապես՝ 9.7 մլրդ դրամ տրամադրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 41.9%-ը և 22.9%-ով զիջելով 2014 թվականի առաջին եռամսյակի ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շեղումը ծրագրից արձանագրվել է հիմնականում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերում, որոնց շրջանակներում կատարվել է ծրագրված կապիտալ ծախսերի 36.8%-ը՝ կազմելով 6.1 մլրդ դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 50.3 մլն դրամ՝ կանխատեսված 710.4 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 86.9%-ով:

Գործառական դասակարգում

2015 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 54 մլրդ դրամ՝ 87.6%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ», «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» և «Պետական պարտքի գծով գործառնություններ» դասերում: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերն աճել են 4.1%-ով՝ հիմնականում պայմանավորված օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման, կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի

տրանսֆերտների և այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասերի ծախսերի աճով:

Օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման դասի ծախսերն առաջին եռամսյակում կազմել են 3.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 79.7%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերն աճել են 55.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ու պատգամավորների պահպանման ծախսերի աճով:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 11.9 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսված ցուցանիշի 73.5%-ը: Հատկացումների զգալի մասը՝ շուրջ 8.7 մլրդ դրամ, ուղղվել է արտահանողների ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարների վերադարձին: Տվյալ դասի ծախսերի շեղումը հիմնականում պայմանավորված է հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման ու համակարգի զարգացման ֆոնդի և ավելացված արժեքի հարկի վերադարձի գծով նախատեսված միջոցները պակաս օգտագործելու հանգամանքով (համապատասխանաբար 22.4%-ով և 89.7%-ով), ինչպես նաև Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 882.4 մլն դրամի միջոցների օգտագործումը հետաձգելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծախսերը նվազել են 11.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.9 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 96.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների, միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների, ինչպես նաև գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների և ՀՀ դեսպանությունների ու ներկայացուցչությունների պահպանման ծախսերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 15.3 մլն

դրամ (29.2%), 401.5 մլն դրամ (96%), 243.6 մլն դրամ (94%) և 2 մլրդ դրամ (99.4%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաքին հարաբերությունների ծախսերն աճել են 14%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (նախարարությունների աշխատակազմերի մասով) պահպանման և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերի աճով:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 593 մլն դրամ կամ նախատեսվածի 72.2%-ը:

Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների դասին 2015 թվականի առաջին եռամսյակում տրամադրվել է 71 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 36.6%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման համար և Եվրոպական հարևանության ու գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված համապատասխանաբար 64.1 մլն դրամը և 14.1 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով: Բացի այդ, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կատարվել են 29.1%-ով և կազմել 16.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների դասի ծախսերն աճել են 12.7%-ով՝ պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով:

Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասին տրամադրվել է 305.3 մլն դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 80.7%-ը: Տվյալ դասում ընդգրկված՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների և Աշխատանքի միջազգային կազմակերպության ու ՄաստերՔարդ հիմնադրամի Work4Youth ծրագրերի համար նախատեսված միջոցները՝ 36.9 մլն դրամ ընդհանուր գումարով, չեն օգտագործվել, իսկ տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 87.3%-ով՝ կազմելով 189.1 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասի ծախսերն աճել են 66.8%-ով՝ պայմանավորված գործադիր իշխանության, պետական

կառավարման հանրապետական ու տարածքային կառավարման մարմինների պահպանման և պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերի աճով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին տրամադրվել է 216.7 մլն դրամ, որը կազմել է հաշվետու ժամանակահատվածի ծրագրային հատկացումների 87.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի կատարողականով, որը կազմել է 109.2 մլն դրամ (77.7%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերն աճել են 42%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական ու տարածքային կառավարման մարմինների պահպանման և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերի աճով:

ՀՀ պետական բյուջեից 2015 թվականի առաջին եռամսյակում ավելի քան 1.7 մլրդ դրամ է տրամադրվել *ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներին*՝ կազմելով ծրագրային հատկացումների 87.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի կատարողականով, որոնք կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 90.5%-ը: Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների և «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ չեն օգտագործվել և կազմել են համապատասխանաբար 149 մլն դրամ (79.4%) և 27.4 մլն դրամ (47.2%): 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքների ծախսերն աճել են 5.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների ծախսերի աճով, որը կազմել է 48.2% և պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների չափերի 2.5 անգամ բարձրացմամբ:

2015 թվականի առաջին եռամսյակում *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին* պետական բյուջեից տրամադրվել է 323.3 մլն դրամ՝ ապահովելով 98% կատարողական: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով՝ պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների համար նախատեսված միջոցների կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է շուրջ 2.1 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 81.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերի կատարողականով, որը կազմել է 68.2% (617.3 մլն դրամ) ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում ծախսվել է նախատեսված միջոցների 12.3%-ը՝ կազմելով 18.5 մլն դրամ, իսկ չորս ծրագրերի շրջանակներում նախատեսված 117.1 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Հարկ է նշել, որ տվյալ խմբում ընդգրկված՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագրի ծախսերն իրականացվել են 162.7%-ով կազմելով՝ 533.3 մլն դրամ: Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են 48.7%-ով՝ հիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2015 թվականի առաջին եռամսյակում *պետական պարտքի գծով գործառնություններին* տրամադրվել է ավելի քան 19.6 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 96%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկման և օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից ու այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման ծախսերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 7 մլրդ դրամ (94.2%) և 4.1 մլրդ դրամ (92.4%): Արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկմանը տրամադրվել է 8.6 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 99.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու ժամանակահատվածում *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* կազմել են 11.1 մլրդ դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմիններին և սահմանամերձ համայնքներին պետական աջակցության ծրագրերի ցածր կատարողականով: Միջոցների զգալի մասն ուղղվել է ՀՀ համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրմանը և ՀՀ Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցմանը, որոնք կազմել են 11 մլրդ դրամ (100%): Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի

տրանսֆերտների ծախսերն աճել են 9.6%-ով՝ հիմնականում պայմանավորված համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 38.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ռազմական կարիքների բավարարման ծախսերի կատարողականով: Մասնավորապես՝ 37.9 մլրդ դրամ հատկացվել է ռազմական պաշտպանությանը, 38.7 մլն դրամ՝ արտաքին ռազմական օգնությանը, 203.5 մլն դրամ՝ պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներին, 556.4 մլն դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, որոնք կազմել են ծրագրային հատկացումների համապատասխանաբար 94.3%-ը, 97.8%-ը, 66.8%-ը և 38.9%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պաշտպանության ծախսերն աճել են 7.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի աճով:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 22.7 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 88.7% կատարողական, ընդ որում, բոլոր դասերում առկա են ծրագրից շեղումներ: Նշված բաժնի ծախսերի 72.6%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 4.5%-ը՝ փրկարար ծառայության, 7.9%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 2.3%-ը՝ դատախազության, 8.9%-ը՝ կալանավայրերի և 3.7%-ը նախաքննության ծախսերի ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառի ծախսերն աճել են 23.4%-ով կամ 4.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոստիկանության, նախաքննության և դատարանների ծախսերի աճով:

Հաշվետու եռամսյակում շուրջ 16.5 մլրդ դրամ է տրամադրվել հասարակական կարգի և անվտանգության բնագավառի ծրագրերին՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 93.1% կատարողական: Նշված գումարից 12.5 մլրդ դրամ տրամադրվել է ոստիկանությանը, 3.9 մլրդ դրամ՝ Ազգային անվտանգությանը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի, ազգային անվտանգության ապահովման և հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերի գծով: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ ոստիկանության և ազգային անվտանգության ծախսերն աճել են համապատասխանաբար 17.9%-ով և 12.6%-ով:

Փրկարար ծառայության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 1 մլրդ դրամ կամ ծրագրի 64.8%-ը և 1.3%-ով զիջել 2014 թվականի առաջին եռամսյակի ծախսերը:

Դատական գործունեությանը և իրավական պաշտպանությանը տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 82.2%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատարանների պահպանման ծրագրի ծախսերի կատարողականով, որը կազմել է 85.2% կամ 1.4 մլրդ դրամ: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ դատական գործունեության և իրավական պաշտպանության ծախսերն աճել են 43.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դատարանների պահպանման և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանման ծախսերի աճով:

Դատախազության խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 528.2 մլն դրամ կամ ծրագրի 83.9%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ դատախազության պահպանմանը, որոնք 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել են 46.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 2 մլրդ դրամ է տրամադրվել *կալանավայրերին*՝ կազմելով ծրագրի 91.5%-ը և 28.5%-ով գերազանցելով նախորդ տարվա առաջին եռամսյակի համապատասխան ցուցանիշը:

2015 թվականի առաջին եռամսյակում *նախաքննության* ծախսերը կազմել են 847.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 66.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ քննչական կոմիտեի պահպանման ծախսերի կատարողականով, որը կազմել է 769.6 մլն դրամ կամ նախատեսվածի 76.7%-ը, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի կարողությունների զարգացման համար նախատեսված միջոցները (133 մլն դրամ) չօգտագործելու հանգամանքով: Նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում ՀՀ քննչական կոմիտեի պահպանման նպատակով ՀՀ պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել, ինչով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ գրանցվել է նախաքննության դասի ծախսերի 20.4 անգամ աճ:

2015 թվականի առաջին եռամսյակում *տնտեսական հարաբերությունների* բաժնի ծախսերը կազմել են շուրջ 15.4 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 73.2% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի, ոռոգման և խողովակաշարային այլ տրանսպորտի դասերի ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների ծախսերն աճել են 26.5%-ով կամ 3.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ոռոգման և գյուղատնտեսության դասերի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են շուրջ 479.1 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 77.5%-ը: Նշված կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ խմբում ընդգրկված յոթ ծրագրերի համար նախատեսված շուրջ 72.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, բացի այդ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանման և ՀՀ

արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կատարվել են համապատասխանաբար 86.4%-ով (161.7 մլն դրամ) և 60.8%-ով (36.6 մլն դրամ): Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 16.7%-ով՝ հիմնականում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանման և հիդրոոդերևութաբանական ծառայությունների ծախսերի համապատասխանաբար 56.8% և 19.9% աճով:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* խմբին տրամադրվել է շուրջ 10 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 82.6%-ը: Խմբի ծախսերի 37.8%-ը կամ 3.8 մլրդ դրամը կազմել են գյուղատնտեսության, 2.1%-ը կամ 209.7 մլն դրամը՝ անտառային տնտեսության և 60%-ը կամ շուրջ 6 մլրդ դրամը՝ ոռոգման ծախսերը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 65%-ով կամ 3.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոռոգման և գյուղատնտեսության դասերի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *գյուղատնտեսության* ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 3.8 մլրդ դրամ կամ ծրագրի 95.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների պատվաստման, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի ծախսերի կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 80.2%, 66.3% և 81.9%: Բացի այդ, դասում ընդգրկված հինգ ծրագրերի համար նախատեսված շուրջ 55.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Միևնույն ժամանակ ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը 41.5%-ով գերազանցել են նախատեսվածը՝ կազմելով 666.8 մլն դրամ: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 19 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են հինգ դրամաշնորհային և երեք վարկային ծրագրեր: Դասում ընդգրկված վեց ծրագրերի գծով, որոնց ծախսերը կազմել են 392.3 մլն դրամ, արձանագրվել է 100% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերն աճել են 99.7%-ով կամ շուրջ 1.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար պետական աջակցության տրամադրմամբ (շուրջ 1.6 մլրդ դրամ), որը 2014 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեով չէր նախատեսվել:

2015 թվականի առաջին եռամսյակում *անտառային տնտեսության* ծախսերը կազմել են 209.7 մլն դրամ և 100%-ով ապահովել ծրագրի կատարումը: Նշված միջոցներով իրականացվել են երկու ծրագրեր՝ անտառապահպանական ծառայությունները և անտառային պետական մոնիթորինգը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 200.6 մլն դրամ և 9.1 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերը նվազել են 16.5%-ով կամ 41.4 մլն դրամով՝ պայմանավորված անտառապահպանական ծառայությունների ծախսերի նվազմամբ:

2015 թվականի առաջին եռամսյակում *ռոռզման* դասի ծախսերը կազմել են շուրջ 6 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 75.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ռոռզման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի և ռոռզման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության ծախսերի կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 37.2% և 88.7%: Բացի այդ, Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ռոռզման համակարգերի զարգացման, Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրերի և կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման ու ընթացիկ նորոգման համար նախատեսված 325.8 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Ռոռզման ոլորտին կատարված հատկացումների հաշվին հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 9 ծրագրեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ռոռզման բնագավառի ծախսերն աճել են 53.5%-ով կամ շուրջ 2.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռոռզման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ռոռզման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով՝ համապատասխանաբար 55.4%-ով և մոտ 5.7 անգամ:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառում 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 267 մլն դրամ՝ 39.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը, որը պայմանավորված է «Վառելիքի այլ տեսակներ» և «Էլեկտրաէներգիա» դասերի ծախսերի համապատասխանաբար 26.4% և 56.3% կատարողականով: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերն աճել են 89.8%-ով կամ 126.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որը 2014 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեում չէր նախատեսվել, ինչպես նաև գործադիր իշխանության, պետական

կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 33.9 մլն դրամ է տրամադրվել միջուկային վառելիքի դասին՝ կազմելով ծրագրի 69.4%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 23.4%-ով կամ 6.4 մլն դրամով:

2015 թվականի առաջին եռամսյակում 107.7 մլն դրամ են կազմել վառելիքի այլ տեսակների դասի ծախսերը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 26.4% կատարողական: Նշված ոլորտում իրականացվել են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 84 մլն դրամ և 23.7 մլն դրամ՝ համապատասխանաբար 34 և 14.7 տոկոսով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը:

Հաշվետու ժամանակահատվածում 125.3 մլն դրամ են կազմել էլեկտրաէներգիայի դասի ծախսերը՝ 56.3%-ով ապահովելով ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ չեն օգտագործվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի գծով նախատեսված շուրջ 70.8 մլն դրամի միջոցները: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ 82.6%-ով ապահովելով ծրագիրը և 54.8%-ով կամ շուրջ 44.4 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2015 թվականի առաջին եռամսյակում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* բնագավառում ՀՀ պետական բյուջեից իրականացվել են 2.6 մլն դրամի ծախսեր՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Հատկացված միջոցներն ուղղվել են ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայության ձեռքբերմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 2.1 անգամ կամ 1.3 մլն դրամով:

2015 թվականի առաջին եռամսյակում *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 3.9 մլրդ դրամ՝ 50.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը, որը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի ծախսերի 54.9% կատարողականով: Խմբի ծախսերի 79.9%-ը կամ 3.1 մլրդ դրամը կազմել են ճանապարհային, 1.9%-ը կամ 75.3 մլն դրամը՝ օդային և 18.2%-ը կամ 712.4 մլն դրամը՝ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տրանսպորտի

խմբի ծախսերը նվազել են 15.3%-ով կամ 709.2 մլն դրամով՝ պայմանավորված ճանապարհային տրանսպորտի ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *ճանապարհային տրանսպորտի* դասում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 3.1 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 54.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ չեն օգտագործվել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման 2-րդ տրանշի վարկային ծրագրի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման 3-րդ տրանշի դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված շուրջ 1.8 մլրդ դրամի միջոցները: Բացի այդ, ճանապարհային տրանսպորտի ծախսերի կատարողականը պայմանավորված է նաև Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի և վերջինիս 3-րդ տրանշի շրջանակներում նախատեսված ծախսերի կատարողականով, որոնք կատարվել են համապատասխանաբար 33%-ով և 0.8%-ով: Միննույն ժամանակ, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների ու քաղաքի կայուն զարգացման ներդրումային և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը համապատասխանաբար 4.2 անգամ և 4.1 անգամ գերազանցել են առաջին եռամսյակում նախատեսված ցուցանիշը՝ կազմելով 945.4 մլն դրամ և 317.4 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը նվազել են 20.4%-ով կամ 803.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծախսերի նվազմամբ: Հարկ է նշել, որ 2015 թվականի առաջին եռամսյակում 426.9 մլն դրամի չափով միջոցներ են հատկացվել Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման նպատակով, որոնք ամբողջությամբ օգտագործվել են, իսկ 2014 թվականի պետական բյուջեում չէին նախատեսվել:

Օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 43.6% կատարողական՝ կազմելով 75.3 մլն դրամ: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերի 32.9% կատարողականով: Չեն օգտագործվել ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների փոխհատուցման համար նախատեսված 14.9 մլն դրամի միջոցները:

Նշված ոլորտում իրականացվել են երեք ծրագրեր՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանումը, մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թոփք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցումը և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 37.9 մլն դրամ, 2.1 մլն դրամ և 35.3 մլն դրամ՝ եռամսյակային ծրագրի համեմատ կազմելով 79.8%, 68.6% և 32.9%: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ օդային տրանսպորտի ծախսերն աճել են 3.2 անգամ կամ 51.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերով, որոնք 2014 թվականի առաջին եռամսյակում չէին իրականացվել:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 712.4 մլն դրամ՝ 37.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 1 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նշված ոլորտում իրականացվել են երեք ծրագրեր, որոնցից երկուսի գծով արձանագրվել է 100% կատարողական: Դրանք են Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումը և համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրումը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 461.6 մլն դրամ և 148.1 մլն դրամ: Իսկ Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի գծով արձանագրվել է 34.3% կատարողական՝ կազմելով շուրջ 102.7 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերն աճել են 6.3%-ով կամ 42.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք 2014 թվականի առաջին եռամսյակում չէին նախատեսվել:

2015 թվականի առաջին եռամսյակում *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 78.3 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցներն ուղղվել են

հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կապի ոլորտի ծախսերը նվազել են 20.9%-ով կամ 20.7 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 18.8 մլն դրամ է հատկացվել *զբոսաշրջության* դասին՝ զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության տրամադրման նպատակով, որը, սակայն, չի օգտագործվել:

2015 թվականի առաջին եռամսյակում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 19.2 մլն դրամ՝ ապահովելով 78.2% կատարողական: Նշված գումարից 8.5 մլն դրամը տրամադրվել է տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին, որոնք օգտագործվել են նախատեսված ծավալով, 10.7 մլն դրամը՝ պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայություններին, որոնց կատարողականը կազմել է 66.7%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը չեն փոփոխվել:

2015 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* խմբի փաստացի ցուցանիշը կազմել է 641.9 մլն դրամ՝ նախատեսված -269.1 մլն դրամի դիմաց: Ընդ որում, խմբի ծախսերը կազմել են 692.2 մլն դրամ՝ 56.8%-ով գերազանցելով ծրագիրը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 50.3 մլն դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսվածի 7.1%-ը: Ծախսերի ծրագրի գերազանցումը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի կատարողականով, որի շրջանակներում ծախսվել է 269.1 մլն դրամ՝ նախատեսված 11.8 մլն դրամի դիմաց, ինչպես նաև Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոհեռուստացիայի արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի շրջանակներում կատարված շուրջ 63.3 մլն դրամի ծախսերով, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեում նախատեսված չէ: Հաշվետու ժամանակահատվածում 92.1 մլն դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված մուտքերի հաշվին առանց սահմանափակման իրականացվող ծախսերը:

2015 թվականի առաջին եռամսյակում *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 87.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի

աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 26%-ով, որը հիմնականում պայմանավորված է նշված երկու ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *աղբահանման* խմբում նախատեսված 6.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ և տրամադրվել է ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններին, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 28.2%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում *օդի աղտոտման դեմ պայքարի* ծախսերը կազմել են ավելի քան 33.6 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 30.9 մլն դրամ են կազմել ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայությունների ձեռք բերման և 2.8 մլն դրամ՝ թափոնների ուսումնասիրության ծառայությունների ծախսերը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի ծախսերն աճել են 4%-ով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է 975.4 մլն դրամ՝ 88.7%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի կատարողականով, որը կազմել է 87.3% (803.5 մլն դրամ): 58.7%-ով են կատարվել Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայությունների գծով նախատեսված ծախսերը՝ կազմելով 11 մլն դրամ: Նշենք, որ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս 10 ծրագրերն իրականացվել են առաջին եռամսյակում նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 160.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերն աճել են 18.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 294.7 մլն դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 82.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի կատարողականով, որոնց գծով օգտագործվել է նախատեսված միջոցների 83.7%-ը կամ 230.3 մլն դրամ: Բացի այդ, ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծախսերը կատարվել են 69.9%-ով՝ կազմելով 9.8 մլն դրամ: Տվյալ խմբում

նախատեսված երկու ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգը և բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ձեռքբերումը, կատարվել են առաջին եռամսյակում նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 7.5 մլն դրամ և 3.4 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել են 2 դրամաշնորհային ծրագրեր՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 92.1% կատարում: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին առաջին եռամսյակում նախատեսված 10.4 մլն դրամի սուբվենցիաները չեն օգտագործվել: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 66%-ով կամ 117.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ բնապահպանության նախարարության պահպանման ծախսերի աճով:

2015 թվականի առաջին եռամսյակում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 3.9 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 63.6%-ը: Շեղումը պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերը նվազել են 21.2%-ով կամ 1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ծախսերի նվազմամբ:

Բաժնի ծախսերի 84.9%-ն ուղղվել է *ջրամատակարարման* բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 3.3 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 60%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Մասնավորապես, արտաքին աջակցությամբ իրականացվող 5 վարկային և 2 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում առաջին եռամսյակում նախատեսված միջոցները՝ 705 մլն դրամի չափով, չեն օգտագործվել, իսկ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող 7 այլ ծրագրերի գծով նախատեսված միջոցներից պակաս է օգտագործվել 2.2 մլրդ դրամ: Միաժամանակ, արտաքին աջակցությամբ իրականացվող 3 ծրագրերի գծով արձանագրվել է ծրագրային ցուցանիշի գերազանցում 742.5 դրամի չափով: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների սուբսիդավորումը՝ համապատասխանաբար 352.1 և 5.7 մլն դրամի չափով, իսկ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի) պահպանման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 83.5%-ով, որոնք կազմել են 39.8 մլն դրամ

և 58.7%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ ջրամատակարարման բնագավառի ծախսերը նվազել են 25.8%-ով կամ 1.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրիի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում 436 մլն դրամ է օգտագործվել համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման շրջանակներում: Նշված ծախսերը 100%-ով ապահովել են ծրագրված ցուցանիշը և 13%-ով կամ 50.2 մլն դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 145.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 84.8%-ով: Նշված միջոցներից 119 մլն դրամ ուղղվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը, 26.4 մլն դրամ՝ նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանմանը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 51.4%-ով կամ 49.4 մլն դրամով:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են շուրջ 14.0 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 86.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 12.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայությունների գծով կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման նպատակով պետական բյուջեից ծախսվել է շուրջ 253.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 63%-ը, որն ուղղվել է ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դեղագործական ապրանքների ձեռքբերման ծախսերն աճել են 69.1%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում *արտահիվանդանոցային ծառայությունների* տրամադրվել է շուրջ 4.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերով, որոնք կատարվել են 37.7%-ով և կազմել 126.2 մլն դրամ: Արտահիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերի 37%-ը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 30.9%-ը՝

մասնագիտացված բժշկական ծառայությունների, 2.6%-ը՝ ստոմատոլոգիական ծառայությունների, 29.5%-ը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերն աճել են 19.6%-ով կամ 746.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է բնակչության առողջության առաջնային պահպանման և նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների, ինչպես նաև պարաբժշկական ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում բնակչության առողջության առաջնային պահպանման ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով շուրջ 1.7 մլրդ դրամ և 17.3%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը:

Մասնագիտացված բժշկական ծառայությունների ձեռքբերման համար օգտագործվել է 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 657.1 մլն դրամն ուղղվել է նեղ մասնագիտացված բժշկական օգնության, 395.9 մլն դրամը՝ հեմոդիալիզի անցկացման, 251.4 մլն դրամը՝ մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը: Մասնագիտացված բժշկական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 99.2%-ով և 24.1%-ով գերազանցել նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 119.2 մլն դրամ է տրամադրվել ստոմատոլոգիական ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 80.1%-ը և 11.1%-ով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պարաբժշկական ծառայությունների ձեռքբերման նպատակով 2015 թվականի առաջին եռամսյակում տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 86.2%-ը և 21.6%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2015 թվականի առաջին եռամսյակում *հիվանդանոցային ծառայությունների* շրջանակներում օգտագործվել է ավելի քան 7.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Խմբի ծախսերի 34.6%-ը կամ 2.5 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 25.1%-ը կամ 1.8 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների և 40.4%-ը կամ 2.9 մլրդ դրամը՝ մոր և մանկան բժշկական ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 99, 96.3 և 99 տոկոսով ապահովել են եռամսյակային ծրագրի կատարումը: Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության, մանկաբարձական բժշկական օգնության և երեխաներին բժշկական օգնության ծառայությունները, որոնց գծով ծախսվել է 1.4-ական մլրդ դրամ՝ համապատասխանաբար 99.5%-ով, 99.6%-ով և 99.9%-ով ապահովելով

ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդանոցային ծառայությունների ծախսերն ավելացել են 8.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնության և փորձաքննությունների, մանկաբարձական բժշկական օգնության և երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ծախսերի աճով: Բացի այդ, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման նպատակով հատկացվող միջոցները «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրից տեղափոխվել են սույն խմբի «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագիր. այս նպատակով առաջին եռամսյակում տրամադրվել է 286 մլն դրամ կամ նախատեսվածի 96%-ը: 2015 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ձեռքբերման նպատակով, որոնք օգտագործվել են 72%-ով և կազմել շուրջ 90 մլն դրամ:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից 1.1 մլրդ դրամ տրամադրվել է *հանրային առողջապահական ծառայությունների* ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 72.3%-ը: Խմբում ընդգրկված են 4 ծրագրեր, որոնցից երկուսի գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ու իմունականխարգելման ազգային ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 462.6 մլն դրամ (95.0%) և 557.4 մլն դրամ (59.0%): 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հանրային առողջապահական ծառայությունների ծախսերը նվազել են 4.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Այլ դասերին չչարկանող առողջապահական ծախսերը 2015 թվականի առաջին եռամսյակում կազմել են 938.4 մլն դրամ կամ նախատեսվածի 44.3%-ը: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել է 18 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և չորս դրամաշնորհային ծրագրեր: Նշենք, որ խմբի ծախսերի կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վերահսկման և Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 99.6 մլն դրամ

(19%) և 203.6 մլն դրամ (44%): Բացի այդ, կատարողականի ցուցանիշի վրա զգալի ազդեցություն է գործել նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության ծախսերի կատարողականը, որը կազմել է 3% (8.9 մլն դրամ): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերն աճել են 34.4%-ով կամ 240.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման, ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառներում 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 6.5 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 75.3%-ը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերն աճել են 63.7%-ով կամ 2.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արվեստի և հեռուստառադիոհաղորդումների բնագավառներին տրամադրված միջոցների ավելացմամբ:

Հաշվետու եռամսյակում 480 մլն դրամ է տրամադրվել հանգստի և սպորտի ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 76.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման և ՀՀ առաջնություններին ու միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար 13.1 մլն դրամ (18.2%) և 230.9 մլն դրամ (81.8%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերը նվազել են 13.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է շախմատիստների պատրաստման ծառայությունների և ՀՀ առաջնություններին ու միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման գծով ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2014 թվականին Սոչիում տեղի ուեցած ձմեռային օլիմպիական և պարաօլիմպիկ խաղերին ու Խորվաթիայում կայացած խուլերի շախմատի օլիպիական առաջնությանը մասնակցության ապահովման նպատակով նախորդ տարվա առաջին եռամսյակում միջոցների հատկացմամբ:

2015 թվականի առաջին եռամսյակում *մշակութային ծառայություններին* տրամադրվել է 3.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 66.7%-ը, որը պայմանավորված է արվեստի բնագավառի ծախսերի կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում 327.8 մլն դրամ է տրամադրվել գրադարաններին՝ ապահովելով ծրագրի 98.5%-ը և 34.7%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2015 թվականի առաջին եռամսյակում 437.5 մլն դրամ է տրամադրվել թանգարաններին և ցուցասրահներին՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 19.5%-ով:

Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 8.3 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 99.4%-ը: Միջոցներն ուղղվել են համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը և 32.3%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Այլ մշակութային կազմակերպությունների ծախսերը կազմել են 166.4 մլն դրամ կամ առաջին եռամսյակի համար նախատեսված հատկացումների 100%-ը: Միջոցների հիմնական մասը՝ 98.4 մլն դրամը և 55.4 մլն դրամը, ուղղվել է համապատասխանաբար արխիվային ծառայություններին և համայնքների բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը, որոնք իրականացվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ մշակութային կազմակերպությունների ծախսերն աճել են 24.8%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից 2.5 մլրդ դրամ տրամադրվել է արվեստի բնագավառի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 58.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցները (1.5 մլրդ դրամ) չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արվեստի բնագավառի ծախսերն աճել են 173.7%-ով՝ հիմնականում պայմանավորված 2015 թվականին ավստրիական «Վազներ-Բիրո Աուստրիա Ստեյջ Սիստեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր Կոնտրոլս ՋիԷմբի ԷյՋ» և «Արթստեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի մեկնարկով, որի շրջանակներում 2015 թվականի առաջին եռամսյակում կատարվել են 1.3 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 89.7%-ը: Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են արվեստի բնագավառում ընդգրկված թատերական ներկայացումների ծախսերը, որոնք կազմել են 310 մլն դրամ, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների գծով ծախսերը՝ 273.9 մլն դրամ ու օպերային և բալետային արվեստի ներկայացումների ծախսերը՝ 250.3 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ծավալով օգտագործվել են նաև կինեմատոգրաֆիայի բնագավառի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 126.7 մլն դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 2.3%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 32.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման ծախսերն աճել են 114.5%-ով՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ տվյալ դասում ընդգրկված՝ հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրման համար նախատեսված միջոցները՝ 15 մլն դրամի չափով, 2014 թվականի առաջին եռամսյակում չէին օգտագործվել:

Հաշվետու ժամանակահատվածում *նադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ 97.7%-ով ապահովելով ծրագրային հատկացումները և 48.1%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է հեռուստատեսային ծառայությունների ծախսերի աճով: Մասնավորապես՝ 1.8 մլրդ դրամ (նախատեսվածի 99.3%-ը) են կազմել հեռուստառադիոհաղորդումների, 219.9 մլն դրամ (նախատեսվածի 85.9%-ը)՝ հրատարակչությունների և խմբագրությունների, 73.7 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ հեռուստառադիոհաղորդումների դասի ծախսերն աճել են 57.9%-ով, հրատարակչությունների ու խմբագրությունների դասինը՝ 11.1%-ով, իսկ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը նվազել են 1.4%-ով:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների դասին 2015 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել է 231 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 64.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերի կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է 92.5 մլն դրամ կամ նախատեսվածի 44.5%-ը: Երիտասարդական ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 138.5 մլն դրամ կամ նախատեսվածի 90.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերն աճել են 5.6 անգամ, իսկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծախսերը՝ 50.8%-ով, ինչի արդյունքում կրոնական և հասարակական այլ ծառայությունների խմբի ծախսերն աճել են 79.9%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի* խմբի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 143 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 87.4%-ը, որն ուղղվել է ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարությունների և նրանց համակարգում գործող ծրագրերի իրականացման

գրասենյակների պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ծախսերն արձանագրել են 54.6% աճ:

2015 թվականի առաջին եռամսյակում *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 21.7 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 93.6% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ կրթության ծախսերն աճել են 6.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է տարրական ընդհանուր կրթության, բարձրագույն մասնագիտական կրթության, միջին մասնագիտական կրթության և արտադպրոցական դաստիարակության դասերի ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից ավելի քան 5.2 մլրդ դրամ տրամադրվել է *նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը*՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Հատկացումների հիմնական մասը՝ համապատասխանաբար 3.6 մլրդ դրամ և 1.1 մլրդ դրամ, ուղղվել է հանրակրթական ուսուցման և հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 99.9%-ով և 99.5%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 14.9%-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում կրթության ոլորտում կատարված ծախսերի 46.5%-ն ուղղվել է *միջնակարգ ընդհանուր կրթությանը*: Նշված ծախսերը կազմել են 10.1 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 99.1%-ը, որից 6.8 մլրդ դրամը տրամադրվել է հիմնական ընդհանուր կրթության, 3.3 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրերի ֆինանսավորմանը: Միջնակարգ ընդհանուր կրթության խմբին հատկացված միջոցների հիմնական մասը՝ 9.0 մլրդ դրամը, կազմել են հանրակրթական ուսուցման ծախսերը, որոնք կատարվել են 99.6%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի 0.4% աճ:

Հաշվետու ժամանակահատվածում *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծախսերը կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 97.9%-ը: Նշված գումարից 484 մլն դրամը տրամադրվել է նախնական մասնագիտական (արհեստագործական), 1.3 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծրագրերին, որոնց եռամսյակային ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.3%-ով և 97.4%-ով: Միջին մասնագիտական կրթությանը տրամադրված միջոցներից շուրջ 1.2 մլրդ դրամն (97.2%) ուղղվել է միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության խմբի ծախսերն աճել

են 25.9%-ով՝ հիմնականում պայմանավորված միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների գծով կատարված ծախսերի աճով:

2015 թվականի առաջին եռամսյակում *բարձրագույն կրթության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 93.6%-ով կատարում: Նշված միջոցներից շուրջ 2.0 մլրդ դրամը կազմել են բարձրագույն մասնագիտական կրթության, 167.3 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության դասի ծախսերը: Ծրագրից շեղումը մեծ մասամբ պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության և բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի գծով ծախսերի կատարողականով, որը համապատասխանաբար կազմել է 79.8% (382.9 մլն դրամ) և 73.6% (112.5 մլն դրամ): Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարձրագույն կրթության խմբի ծախսերն աճել են 23.5%-ով՝ հիմնականում պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման և բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը 2015 թվականի առաջին եռամսյակում կազմել են 1.0 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 91.2%-ով կատարում: Մասնավորապես՝ 841.3 մլն դրամ են կազմել արտադպրոցական դաստիարակության, 169.5 մլն դրամ՝ լրացուցիչ կրթության բնագավառների ծախսերը: Շեղումը հիմնականում առաջացել է լրացուցիչ կրթության ծախսերում, որոնք կատարվել են 63.7%-ով՝ հիմնականում պայմանավորված վերապատրաստման ծառայությունների, հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայությունների և ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերն աճել են 43.8%-ով՝ պայմանավորված արտադպրոցական դաստիարակության գծով ծախսերի աճով:

2015 թվականի առաջին եռամսյակում *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 55.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի կատարողականով: Վերջինիս շրջանակներում կատարվել են 117.1 մլն դրամի ծախսեր, որը կազմում է առաջին եռամսյակի ծրագրի 11.3%-ը: Արդյունքում արձանագրվել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբի ծախսերի անկում նաև 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, որը կազմել է 28.3%:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ավելի քան 166.2 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* դասին, որում ընդգրկված են գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ու ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պահպանմանը: Նշված ծախսերը կատարվել են 87.3%-ով և 72.3%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2015 թվականի առաջին եռամսյակում սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կազմել են 88.7 մլրդ դրամ՝ 94%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Բաժնի բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ, սակայն առավելագույն գումարը բաժին է ընկել այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության, ծերության և ընտանիքի անդամներ ու զավակներ խմբերին: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն աճել են 18.8%-ով կամ 14 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքային կենսաթոշակների, կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման և երեխայի ծննդյան միանվագ նպաստի գծով ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից 116.7 մլն դրամ է տրամադրվել *վատառողջության և անաշխատունակության* խմբի ծախսերին՝ կազմելով ծրագրի 45.1%-ը: Նշված հատկացումներից 24.5 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, 92.2 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 51.4%-ով և 43.7%-ով: Վատառողջության դասի կատարողականը հիմնականում պայմանավորված է բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների համար նախատեսված 22.3 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով: Անաշխատունակության դասի կատարողականը պայմանավորված է հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար նախատեսված միջոցները պակաս օգտագործելու (74.3 մլն դրամ կամ 43.4%), ինչպես նաև հաշմանդամներին սայլակներով ու լսողական սարքերով ապահովման և Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրման նպատակով նախատեսված միջոցները (համապատասխանաբար 17.1 մլն դրամ և 3.2 մլն դրամ) չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անաշխատունակության դասի ծախսերն աճել են 9 անգամ, որը պայմանավորված է հիմնականում 2014 թվականի առաջին եռամսյակում հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար նախատեսված միջոցներն

ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Վատառողջության դասի ծախսերի աճը կազմել է 9.6%:

Ծերության բնագավառի ծրագրերին 2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 67.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատանքային և սոցիալական կենսաթոշակների ծախսերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 54.8 մլրդ դրամ կամ 98.8% և 3.3 մլրդ դրամ կամ 87.6%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծերության բնագավառի ծախսերի 17.9%-ով աճը հիմնականում պայմանավորված է աշխատանքային կենսաթոշակների և կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով:

Հարազարին կորցրած անձանց խմբի միջոցներից հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ծախսերի 92.2% կատարողականով: Արդյունքում խմբի ծախսերը զիջել են նաև 2014 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.9%-ով:

Ընտանիքի անդամների և զավակների խմբի գծով պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 13.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հղիության և ծննդաբերության նպաստի և երեխաների շուրջօրյա խնամքի ծառայությունների գծով ծախսերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 615.4 մլն դրամ կամ ծրագրվածի 41.8%-ը և 407.3 մլն դրամ կամ ծրագրվածի 73.1%-ը: Խմբի ծախսերի գերակշիռ մասը՝ 8.8 մլրդ դրամը բաժին է ընկել ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներին, որոնք օգտագործվել են 99.6%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընտանիքի անդամներ և զավակներ խմբի ծախսերն աճել են 19%-ով՝ հիմնականում պայմանավորված երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման ծախսերի աճով, որոնք կազմել են 2.3 մլրդ դրամ և 3.2 անգամ գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Սոցիալական ոլորտի ծախսերից 138.6 մլն դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբին, որը կազմել է եռամսյակային ծրագրի 43.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության նպատակով նախատեսված միջոցները (131.8 մլն դրամ) չօգտագործելու հանգամանքով: Գործազրկության խմբի ծախսերը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 64.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գործազրկության նպաստի գծով ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից 124.7 մլն դրամ է տրամադրվել *բնակարանային ապահովման* խմբին՝ կազմելով ծրագրի 99.7%-ը: Միջոցներն ուղղվել են զոհված

(մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 106.4%-ով կամ 64.3 մլն դրամով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնություններին առաջին եռամսյակում տրամադրվել է շուրջ 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.2% կատարողական: Խմբի ծախսերի գերակշիռ մասը՝ 2.6 մլրդ դրամը՝ (98.9%) բաժին է ընկել ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության ծախսերին, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 23.4%-ով: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերն աճել են 37.6%-ով հիմնականում պայմանավորված նշված ծախսերի աճով, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրմամբ, որը նախորդ տարվա առաջին եռամսյակում չէր իրականացվել: Ավանդների փոխհատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են ծրագրով նախատեսված ծավալով և կազմել են 371.1 մլն դրամ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 3.3 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 55.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման և ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Նշված ծախսերը կազմել են համապատասխանաբար 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 48.1%-ը և 433.4 մլն դրամ կամ նախատեսվածի 38.6%-ը: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծախսերն աճել են 44.7%-ով՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ երկու ծրագրերի, ինչպես նաև տվյալ խմբում ներառված պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով: Բացի այդ, 2015 թվականի առաջին եռամսյակում միջոցներ են հատկացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երեվանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման դրամաշնորհային

ծրագրի շրջանակներում, որոնք նախատեսված ծավալով օգտագործվել են և կազմել են 165.1 մլն դրամ:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից նախատեսված 3.7 մլրդ դրամից օգտագործվել է շուրջ 1.4 մլրդ դրամը կամ 37%-ը՝ 2014 թվականի նույն ժամանակահատվածի 3.8 մլրդ դրամի դիմաց: Միջոցներն ամբողջությամբ ուղղվել են ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 18.6 մլրդ դրամ պակասուրդով՝ ծրագրով նախատեսված 52.9 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 3.8 մլրդ դրամ հավելուրդով: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ծախսերի կատարողականով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում ձևավորված ազատ միջոցները (ներառյալ ժամանակավոր ազատ միջոցները) ավելացել են 97 մլն դրամով՝ եռամսյակային ծրագրով նախատեսված 67.9 մլրդ դրամի դիմաց, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ներգրավվել են ծրագրվածից պակաս վարկային միջոցներ:

Հաշվետու ժամանակահատվածում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -105.7 մլրդ դրամ՝ նախատեսված -77.3 մլրդ դրամի դիմաց: Շեղումը, ինչպես նշվեց, հիմնականում առաջացել է բյուջեի ազատ միջոցների պակաս օգտագործման արդյունքում:

2015 թվականի առաջին եռամսյակում նախատեսվում էր տեղաբաշխել 26.0 մլրդ դրամ և մարել՝ 19.0 մլրդ դրամ ծավալով պարտատոմսեր: Բացի թողարկումների ծրագրից նախատեսվում էր շարունակել նաև ամենամսյա հետգնումների քաղաքականությունը: 2014թ. տարեվերջին ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով պետական (գանձապետական) պարտատոմսերի նկատմամբ զրոյական պահանջարկի պայմաններում, ֆինանսական շուկայից փոխառու միջոցներ ներգրավելու հնարավորության վերականգնման նպատակով, 2015թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացվեց պարտատոմսերի փոխանակման ծրագիր: Փաստացի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի պակասուրդը գանձապետական պարտատոմսերի հաշվին բացասաբար է ֆինանսավորվել 5.6 մլրդ դրամի չափով (ծրագրով նախատեսված 5.8 մլրդ դրամի դիմաց)՝ 31.2 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 28.6 մլրդ դրամ հասույթի և 34.2 մլրդ դրամի մարման (այդ թվում՝ 18.93 մլրդ դրամ հետգնման) ցուցանիշների պարագայում:

2015 թվականի առաջին եռամսյակում շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 380.0 մլն դրամ ծավալով: Այս

պարտատոմսերից տեղաբաշխվել են 201.87 մլն դրամի պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 202.92 մլն դրամ:

2015 թվականի առաջին եռամսյակում պետական պարտատոմսերի թողարկման ծրագրի իրագործման արդյունքում ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. 2015 թվականի մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 286.7 մլրդ դրամ (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 272.7 մլրդ դրամ): Պարտքի միջին ժամկետայնությունը կազմել է 1743 օր (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 1870 օր), շրջանառության մեջ եղած ներքին պարտքի եկամտաբերությունը՝ 13.72% (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 13.98%): 2015 թվականի մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 33.5 մլրդ դրամ կամ 11.7% (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 12.9 մլրդ դրամ կամ 4.7%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 141.4 մլրդ դրամ կամ 49.3% (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 153.9 մլրդ դրամ կամ 56.4%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 110.8 մլրդ դրամ կամ 38.6% (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 104.8 մլրդ դրամ կամ 38.5%), խնայողական պարտատոմսերինը՝ 1.03 մլրդ դրամ կամ 0.4% (2014թ. մարտի 31-ի դրությամբ՝ 1.1 մլրդ դրամ կամ 0.4%), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2032 թվականն է:

Ներքին պետական պարտքն անվանական արժեքով եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 327.7 մլրդ դրամ, այդ թվում՝

- Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 286.2 մլրդ դրամ.
- Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 38.6 մլրդ դրամ (82.1 մլն ԱՄՆ դոլար).
- Ռեզիդենտ բանկից ներգրավված առևտրային վարկի ծավալը կազմել է 1.9 մլրդ դրամ (4.0 մլն ԱՄՆ դոլար).
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է 1.0 մլրդ դրամ (2.1 մլն ԱՄՆ դոլար):

Մուրհակների մարման նպատակով առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 100.0 հազ դրամի վճարումները չեն կատարվել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 5.3 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով ծրագրվածի 90.8%-ը: Նշված գումարից շուրջ 4.0 մլրդ դրամը (նախատեսվածի 100%-ը) հատկացվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին, 309.8 մլն դրամը (100%)՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին: 1.0 մլրդ դրամի վարկային միջոցներ են

տրամադրվել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրվածի 73.9%-ը:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը, որից, մասնավորապես, 1.2 մլրդ դրամը վճարվել է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից:

2015 թվականի առաջին եռամսյակում կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործումը կազմել է 900.0 հազ դրամ՝ նախատեսված 10.5 մլն դրամի դիմաց, իսկ հաշվի համալրումը կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 124.4 մլրդ դրամ:

2015 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է 124.3 մլրդ դրամ՝ նախատեսված 130.1 մլրդ դրամի դիմաց:

Փոխառու միջոցներից զուտ ֆինանսավորումը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 135.8 մլրդ դրամ՝ նախատեսված 140.6 մլրդ դրամի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվել են 7.7 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 60.7%-ը: Նշված ցուցանիշը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարման աստիճանով: Մասնավորապես՝ 19 ծրագրերի շրջանակներում նախատեսված գումարները՝ 3.4 մլրդ դրամի չափով, առաջին եռամսյակում չեն ստացվել, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում ստացվել է շուրջ 242.9 մլն դրամ կամ նախատեսվածի 33.9%-ը, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի շրջանակներում՝ 149.7 մլն դրամ կամ նախատեսվածի 18.5%-ը, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում՝ 695 մլն դրամ կամ նախատեսվածի 53.1%-ը, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի երկրորդ փուլի շրջանակներում՝ 77.2 մլն դրամ կամ նախատեսվածի 8.2%-ը:

2015 թվականի առաջին եռամսյակում շուրջ 7.6 մլրդ դրամ (նախատեսվածի 97.1%-ը) ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 2.0 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 2.6 մլրդ դրամը՝ Զարգացման Միջազգային Ընկերակցության նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը, 328.9 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 2.5 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետությունների նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը:

Ֆինանսական զուտ ակտիվների ցուցանիշը կատարվել է 110.2%-ով և կազմել -11.5 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ-ին միջպետական վարկի գծով նախատեսված 10.4 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով նույնպես նախատեսված վճարումն ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 107.3 մլն դրամ: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 483.1 մլն դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 100%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 668.4 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը:

2015 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,849.2 մլրդ դրամ (3,924.4 մլն ԱՄՆ դոլար): Պարտքի հիմնական մասը՝ 1,646.2 մլրդ դրամը (3,493.6 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 203 մլրդ դրամը (430.8 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները: